

Նկ. 92. Արձ. № 169:

1 *Յամի յորում եղեւ կատարո-*
2 *ւմն արքային վրաց Գիորգէ, ես՝*
3 *Գրիգոր վարդապետ, որդի Տուտէ*
4 *Խաչենացւո, բնակեալ ընդ հով-*
5 *անեաւ սրբո Ածածնիս, կանգնեցի զ-*
6 *խաչս ի վերա հանգստարանի իմո*
7 *ակն ունելով ելից ի կենցաղոյս:*
8 *Եւ արդ, անկեալ դնիմ առ ոտս քո*
9 *նշանդ Այ եւ աղաչեմ անբարբ-*
10 *առ շրթամբք, զի ի մեծի երևման*
11 *քո լիցիս բարեխաւս անարժան ծ-*
12 *առայիս Քի: Եւ որք երկրպագէք յի-*
13 *շեցէք ի Քս Յս: Կանգնեցաւ ի*
14 *հայրութեանս Յովհաննիսի, յո-*
15 *րում ամի Նորոգեցաւ կաթու-*
16 *ղիկէս սբ: Ի թւ. ՈԼԳ: ԶՄխիթար*
17 *կազմիչ յիշեսջիք ի Քս: Աւետիս:*

Ծանոթություն.— *Վերջին բառը փակագիր է և կարդացվում է Աւետիս: Արձանագրության հրատարակիչներից և ոչ մեկն այդ բառը չի կարդացել: Արձանագրությունների վերջում սովորաբար լինում է* ամեն *բառը, որ այստեղ զանց է առնված, իսկ թե Ավետիսն ով է եղել, լավ չի պարզվում, քանի որ խաչքարի կազմողը Մխիթարն է:*

*Կարելի է ենթադրել, որ Ավետիսը Մխիթարի աշակերտն է (օգնականը) և կամ արձանագրության փորագրիչը:*

Տարընթերցում.— *1.* Ջալ, *որից արտագրելով նաև* Հար *և* Լալ *երկրորդ տողում* Գիորգէ *կարդացել են* Գուրգենի:

*2.* Ջալ *նաև նրանից արտագրող* Հար *և* Լալ *14-րդ տողում* ի հայրութեանս *կարդացել են* ի հայրապետութեան:

*3.* Ջալ, Հար, Լալ *արձանագրության վերջում* աւետիս *չեն ընդօրինակել:*

## 170. Նախորդից դեպի աե, մի այլ խաչքարի թիկունքին

(Լուս. № 93)

### *Հ ՈՀՁ Մ 1227*

Հրատարակված է՝ Ջալ 27—28, Հար 307, Լալ 392, Վիմ 251

1 *Ի թվի ՈՀՁ.*
2 *Ես՝ տր Յոհանէս, առ-*
3 *աջնորդ սր ուխտին Հ-*